




ՆՈՐ ՆՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՐԲՈՅ ՅԱԿՈՒԲԵԱՆՅ ՏՊԱՐԱՆԷՆ



1.- Նորիան Արք. Մանուկեան, «Եւ Դարձայ Եղև Լոյս», Երուսաղէմ, 2014, 229 էջ:

Պատմական վէպ, ուր Դ-Ե. դարերու պատմական, աշխարհիկ ու հոգեւոր կերպարներու ընդմէջէն կը ցոլանայ ժամանակաշրջանը իր հարցերով ու խնդիրներով, որոնց լուծման բանալին կը դառնայ Գրոց Գիտը՝ տեսիլքովը Սրբ. Մեսրոպ Մաշտոցի: Կը յանձնարարուի մասնատրաբար հայ աշակերտութեան և ընդհանրապէս հայ ընթերցողներուն:

2.- Եղիվարդ, «Ապրիլ 24», Երուսաղէմ, 2014, 308 էջ:

Բանաստեղծութիւններու հատորը կը ներկայացնէ բանաստեղծ Եղիվարդի և Պատրիարքի ազգային-հայրենասիրական և հոգեւոր թեմաներով գրուած ու քնարերգական շունչով յօրինուած ցարդ անտիպ մնացած ապրումները:

3.- Բագրատունի (Բագրատ Վրդ. Պուրճեւեան), «Լոյսն Ուշացած», բանաստեղծութիւններ, 2014, Երուսաղէմ, 78 էջ:

Տատրիկը կ'ընդգրկէ 1990-2012 տարիներու ընթացքին գրուած 67 բանաստեղծութիւններ, որոնք բանաստեղծին «սրտի ու հոգիի խորքերէն մուտէն լոյսին վերբերուած, ապրուած զգացումներու փունջ մըն է»:

4.- Ara Voskian, «A Prince Among Equals», Jerusalem, 2014, 264 pages

Պատմական վէպ՝ նուիրուած Ե. դարու ազգային ազատագրական պայքարի իրադարձութիւններուն, որոնց մէջ Վարդան Մամիկոնեան, Վասակ Սիւնի, Գիտ Իշխան և Տայոց աւագանին ու հոգեւորական դասը՝ Ղեւտղ Երէց, Եղիշէ և ուրիշներ կը պայքարին յանուն Տայաստանի հոգեւոր, մտաւոր և ինքնուրոյնութեան պահպանման: Վէպի գլխատր կերպարը Վարդան Մամիկոնեանն է: Ուժգնօրէն կը յանձնարարուի անգլիախօս երիտասարդութեան:

ՍՏԱՅՈՒԱԾ ՆՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ ստացած ենք.

1.- Սր. Գրիգոր Նարեկացի, «ՆԱՐԵԿ Աղօթամատեան», Երեւան, «ՎՄՎ-ՊՐԻՆՏ», 2013: Գրաբար բնագրի հանդիպադրութեամբ՝ արդի հայերէնի փոխառ դրութիւնը՝ Աշոտ Պետրոսեանի:

2.- Պարոյր Մուրադեան, «Կովկասեան Մշակութային Աշխարհը եւ Տայաստանը», Պրակ Ա., Տայաստանի Տանրապետութեան Ազգային Ակադեմիա, Արեւելագիտութեան Ինստիտուտ, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Տրատարակչութիւն, 2008:

3.- Մինաս Գոճայեան, «Յուշամատեան, Պատմութիւն Չորք-Մարգպանի», Լոս Անճելըս, 2006, 384 էջ: